Հավելված N 7
2021թ. Ապրիլ « 19 »
N ԴՏՊ-1160-11006/Մ-4 պայմանագրի

**Ծրագրի եռամսյակային հաշվետվություն**

**Միջոցառման անվանումը՝ «Մտավոր խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային սոցիալ-վերականգնողական ծառայություններ»**

**Համառոտ բովանդակությունը՝** Խնամքի և սոցիալ-վերականգնողական ծառայությունների մատուցում Վարդենիսի տարածաշրջանի համայնքներում ապրող մտավոր և հոգեկան խնդիրներ ունեցող անձանց ցերեկային կենտրոնում

**Հաշվետու ժամանակաշրջան՝** *2021թ. Առաջին եռամսյակ*

| | Իրականացված գործողություններ | Ակնկալվող արդյունքները (2) | Գնահատման չափանիշները և հիմնավորող փաստաթղթեր (3)* | Փաստացի մատուցած ծառայություններ (4) | Մեկնաբանություն (5) |
|---|---|---|---|---|---|
| | -Կատարվել է շահառուների ընդունելություն և պայմանագրերի կնքում՝ ծնողների հետ<br>- Բազմամասնագիտական թիմի կողմից կատարվել է շահառուների կարիքների և կարողությունների գնահատում<br>-Գնահատման արդյունքում պատրաստվել է յուրաքանչյուր շահառուի համար սոցիալ-վերականգնողական անհատական ծրագիր<br>-Կազմվել է ժամանակացույց՝ անհատական և խմբակային աշխատանքների կազմակերպման համար, և շահառուների ուղղորդում՝ անհրաժեշտ մասնագետների և խմբակավարների մոտ: | Մտավոր խնդիրներ ունեցող անձանց մատուցվել են սոցիալ- վերական գնողական ծառայություններ, որոնց արդյունքում նրանք ձեռք են բերել ինքնախնամքի, ինքնասպասարկման, կենցաղավարության, | Բազմամասնագիտա կան թիմի բոլոր անդամները ունեն շահառուների հետ կատարվելիք աշխատանքների թեմատիկ պլանավորում և դրանց կատարողականի օրագիր:Անընդհատ | Մատուցվել են սոց աշխատողի, հոգեբանի, հատուկ մանկավարժի, էրգոթերապիստի, ծառայություններ: Շահառուները մասնակցել են կարպետագործության, ջուղագործության, փայտամշակման, կար ու ձևի, համակարգչի | Միջոցառումը շատ կարևոր է և ունեցել է դրական փոփոխություն շահառուների կյանքում: Ընտանիքների հավաստմամբ և մեր դիտարկումներով նրանք շտապում են գալ կենտրոն, որտեղ իրենց ազատ ու անկաշկանդ են զգում, հաճույքով |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Կատարվել են անհատական և խմբակային պարապմունքներ, ժամանցային, բակային, սպորտային խաղեր, միջոցառումներ: Կիրառվել են դիդակտիկ նյութեր,զարգացողական խաղերի պարագաներ, սպորտային-վերականգնողական մարզասարքեր,խմբակների աշխատանքների կազմակերպման համար սարքավորումներ, աշխատանքային գործիքներ և նյութեր | հաղորդակցման հմտություններ:Մասն ակցելով խմբակների պարապմունքների՝ու նեն որոշակի մասնագիտական հմտություններ և կարողանում են պատրաստել տարբեր իրեր: | կատարվում են համեմատություններ շահառուի սկզբնական և առկա վիճակի միջև: յուրաքանչյուր աշխատակից ամսվա վերջում հաշվետվություն է ներկայացնում կատարված աշխատանքների և շահառուի մոտ եղած փոփոխությունների մասին: Շահառուների պատրաստած աշխատանքները և ամենօրյա շփման ժամանակ ցուցաբերած հմտությունները նույնպես դրական փոփոխությունների արդյունք են: | տիրապետման խմբակների պարապմունքներին և ձեռք են բերել մասնագիտական որոշակի հմտություններ Շահառուների առողջությանը և ինքնազգացողությանը հետևել է բուժքույրը, որը նրանց սովորեցրել է նաև ինքնախնամքի, իր մարմնի և շրջապատի մաքրության, հիգենայի, առողջ սննդի և ապրելակերպի կանոնները | մասնակցում են բոլոր պարապմունքներին, ձեռք են բերել ընկերներ և հասարակության մեջ ինքնադրսևորման հմտություններ |

Ընդամենը շահառուներ՝ 34, փետրվար՝ 25, մարտ՝ 22

Ազդեցությունը՝ շահառուների մոտ կան նկատելի դրական փոփոխություններ, նրանց մեծամասնությունը որոշակիորեն պատրաստ է անկախ կյանքի
Մեծանում է շփման միջավայրը, որտեղ նրանք հանդիպում են տարբեր բնավորությամբ տեր մարդկանց և կարողանում են ինքնադրսևորվել, չկաշկանդվել,ոգևորվել, հաղորդակցվել, ընկերանալ: Նրանք արդեն բավականին ակտիվ են, չեն խուսափում հանրային վայրերից,Կենտրոն

այցելելով՝ շահառուները ձեռք են բերում իրենց նախասիրություններին համապատասխան մասնագիտական հմտություններ, մասնակցում են տարբեր խմբակների պարապմունքներին,զարգացել է ստեղծագործական միտքը և դիզայներական ճաշակը : Շահառուն գիտի ինչպես պահպանել առողջությունը, ինչպես սնվել, ինքնասպասարկվել, զբաղվել իր մարմնի խնամքով ,հետևել իր և շրջապատի մաքրությանը և այլն

Թեթևացել է նաև ընտանիքների հոգսը: Շահառուի Կենտրոնում եղած ժամանակահատվածում ծնողները կարողանում են աշխատել, զբաղվել տնտեսության գործերով կամ պարզապես՝ հանգստանալ

Շահառուները Վարդենիս քաղաքում և հարակից համայնքներում ապրող մտավոր խնդիրներ ունեցող անձինք են: Քանի որ մեր կազմակերպությունը երկար տարիներ ծառայություններ է մատուցում հաշմանդամություն ունեցող անձանց, որոնց թվում եղել են նաև ծրագրում ընդգրկված շահառուներից ոմանք:

Ծրագրի մասին իրազեկվել է ընտանիքներին և համայնքների ղեկավարներին, որոնց օգնությամբ էլ ծրագրում ընդգրկվել են մնացած շահառուները: